

Պատկերապատման գործնական պարապմունքներ Երևանում Հայաստանում պատկերապատման արվեստը խթանող ծրագիր



(c) F. Boudjellal, Futuropolis
in "Mémé d'Arménie"

Համատեքստ

2008թ հոկտեմբերի 3, 4, 5 –ին Հայաստանում Պատկերապատման Չարգացման Միությունը (APBDA) կազմակերպեց Պատկերապատման եւ Պատկերի առաջին երեւանյան փառատոնը : Այդ օրերին հայ մասնագետները, ծաղրանկարիչները, նկարազարդողները, Գեղանկարչության ակադեմիայի ուսանողները հնարավորություն ստացան հանդիպելու Ֆրանսիայից ժամանած պատկերապատման հեղինակներին : Շատերին այստեղ բերել էր ոչ միայն հետաքրքրասիրությունը այլ նաեւ ցանկությունը զբաղվելու պատկերապատման արվեստով իրենց երկրում, ուր այն գրեթե գոյություն չուներ : Ահա թե ինչու հաջորդ` 2010-ի փառատոնը կազմակերպելուց առաջ APBDA-ն նախաձեռնեց պատկերապատման գործնական պարապմունքներ անցկացնել Երեւանում : Այսպիսով մի խումբ նկարիչներ հնարավորություն կունենան ստեղծել պատկերապատումներ, իսկ հայ հասարակությունը կձանոթանա հնարիավորությունների հետ :

Աշխատանքային ձեւը

Երեք փուլով անցկացվող պարապմունքների ընթացքում մասնակիցը ստեղծելու է 4-8 էջանոց պատկերապատում : Այդ ընթացքում նրան իր խորհուրդներով կաջակցի ֆրանսիացի փորձառու մասնագետը : Պատկերապատման թեման է՝ Երեւանը երեկ, այսօր կամ վաղը : Ամենահաջողված գործերը կցուցադրվեն եւ կտպագրվեն 2010թ–ին Պատկերապատման II փառատոնի ժամանակ :

Մասնակիցները

Մասնակիցների առավելագույն քանակը 15 հոգի է : Մասնակիցը պետք է տիրապետի նկարչական արվեստին : Նվազագույն տարիքը՝ 14 տարեկան :

Ընդունելության համար հարկավոր է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

- Ինքնակենսագրական
- Հատված book-ից (արդեն պատրաստի պատկերապատումներից հատվածներ, առավելագույնը 8 էջ)
- Այն պատկերապատման հակիրճ սինոպսիսը (կես էջ), որը մասնակիցը պատրաստվում է ստեղծել գործնական պարապմունքի ընթացքում :

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն ֆրանսերենով (կամ անգլերենով) : Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետը՝ **2009թ հուլիսի 31**: Փաստաթղթերը ներկայացնել DEEM COMMUNICATION ընկերության գրասենյակ (Մաշտոց 39, բն 11, հեռ. 547 211) :

Ընտրված մասնակիցները կմասնակցեն դասընթացներին պայմանով, որ կդառնան APBDA (Հայաստանում Պատկերապատման Չարգացման Միության) անդամ՝ վճարելով 15000 AMD անդամավճար մինչև պարապմունքների սկիզբը : Որեւէ այլ վճարում մասնակիցներից չի պահանջվի :

Դասախոսներ

Ֆարիդ Բուժելալ

Ֆարիդ Բուժելալը ճանաչված հեղինակ է եւ հայտնի իր *L'Oud, Les Slimani, Petit Polio, Juif-Arabes* ստեղծագործություններով, որոնք տպագրվել են Ֆրանսիայում, հիմնականում Soleil կամ Futuropolis հրատարակչությունների կողմից : Նրա ստեղծագործությունները հաճախ են արժանացել Պատկերապատման միջազգային փառատոների բարձր գնահատականին (Անգուլեմ, Սիեր, Սոլիես, Բլուա, Լիմոժ ...):

Բուժելալը դասախոսում է Փարիզի մերձակայքում գտնվող Arc en ciel-Jean Trubert դպրոցում : Նա կազմակերպել է պատկերապատման մի շարք գործնական պարապմունքներ դպրոցականների եւ բանտարկյալների շրջանում :

Դոմինիք Բեդտայ

Դոմինիք Բեդտայը Անգուլեմի գեղանկարչության դպրոցի նախկին սան է : Նրա ռեալիստական գծապատկերը դրսևորվել է երեք տարբեր ստեղծագործություններում՝ *L'Enfer des Pelgram, Shandy, Ghost Money* : Նրա ստեղծագործությունները մրցանակների են առժանացել Բրյուսելում, Կոլոն լը Ռուժում, Շամբերիում : Բեդտայը հանդիսանում է Անգուլեմի գեղանկարչության դպրոցի քննական հանձնաժողովի անդամ : Նա վարել է պատկերապատման մի շարք գործնական պարապմունքներ արտերկրում՝ Բուդապեշտի ֆրանսիական լիցեյում, Udine Film forum-ում, Տետուանի Ալիանս ֆրանսեզում (Մարոկկո)...

Ֆիլիպ Կառակասյան

Ֆիլիպ Կարակասյանը (նույն ինքը ԿԱՌԱՆ) *մանգա* ոճին տիրապետող առաջին ֆրանսոսախոսներից է (մանգան ճապոնական պատկերապատման ոճ է) : Ունի պատկերապատման գործնական պարապմունքների անցկացման մեծ փորձ, քանի որ բազմիցս իրականացրել է այն Ֆրանսիայի վիդեո-գրադարաններում (Նանտ, Բեսանկուր, Կլիշի սու Բուա, Էկուեն ...):

Ծրագիրը

Պարապմունքները կընթանան երեք փուլով, յուրաքանչյուրի տևողությունը՝ 4 օր:

Ամենօրյա հանդիպումները կօգնեն մասնակիցներին իրագործել իրենց պատկերապատմումը : Տարբեր հնարքներ բացատրելիս դասախոսները կօգտագործեն իրենց գործերից կամ պատկերապատման դասականներից վերցված օրինակներ :

Պարապմունքերը կընթանան 2 ժամ առավոտյան , 2 ժամ կեսօրից հետո կարգով : Հնարավորինս ջերմ մթնալարտ ստեղծելու համար դասախոսներն ու մասնակցները կարող են ճաշել միասին : Փուլերի միջանկյալ ժամանակահատվածում մասնակիցները եւ դասախոսները կարող են հաղորդակցվել Ինտեռնետի միջոցով :

I Փուլ – Նախագծի ուսումնասիրում
Սեպտեմբերի 29 – հոկտեմբերի 2
 Դասախոս՝ Ֆարիդ Բուժելալ

Այս փուլում, հիմնվելով ուսանողի կողմից պատրաստված սինոպսիսի վրա, դասախոսը կանցկացնի նախապատրաստական աշխատանքները: Կորոշվի տվյալ պատմությանը առնչվելագույնս համապատասխանող գրաֆիկական ոճը:

Փուլի հիմնական կետերը.

- Սինոպսիսի հաստատում
- Պերսոնաժների ուսումնասիրում
- Պատմողական սկզբունքները պատկերապատման մեջ, ժամանակի գործոնը
- Առաջին տեխնիկական մոտեցումը Ֆարիդ Բուժելալի ստեղծագործությունից վերցված օրինակներով

II Փուլ – Պատմության ուսումնասիրում
Հոկտեմբերի 13-16
 Դասախոս՝ Դոմինիք Բեդտայ

Այս փուլում պետք է բեմադրվի նախորդ փուլում մշակված սցենարը: Մասնակիցը կձանոթանա այն տարրերին, որոնք կազմում են պատմության ընթերցվող մասը՝ շրջանակներ, դեկորներ, կառուցվածք, կոչականներ ...

Փուլի հիմնական կետերը.

- Story board-ի սկզբունքները
- Պատմողական պատկերի բաղադրիչները
- Պատկերապատմանը բնորոշ գրաֆիկական կողերը
- Լուսանկարչական պատկերի օգտագործումը

Երկրորդ եւ երրորդ փուլերի միջեւ ընկած ժամանակահատվածում ուսանողը պետք է ավարտած լինի գծանկարային աշխատանքները:

III Փուլ – Պլաստիկայի ուսումնասիրում
Հոկտեմբերի 27-30
 Դասախոս՝ ԿԱՌԱ

Այս փուլը կեզրափակի նախորդներում կատարած աշխատանքները՝ անցնելով գունավորմանն ու գունազրդմանը: Խոսքը հաճախ կգնա կոմպյուտերային տեխնիկայի կիրառման մասին, եւ չնայած դրան մասնակիցը կարող է ինքը ընտրել իրեն առավել հոգեհարազատ միջոցը՝ ժամանակակից թե ավանդական:

Փուլի հիմնական կետերը.

- Գունավորման եւ գունազրդման տարբեր տեխնիկաների համեմատական ուսումնասիրություն
- Ստվերների եւ խորության տիրապետում
- *Photoshop*, մի քանի խորհուրդ
- Յուրաքանչյուր մասնակցի հետ անհատապես՝ ընտրված տեխնիկայի եւ պատմության համապատասխանության քննում

Դրանից հետո մասնակիցը մի քանի շաբաթվա ընթացքում պետք է ավարտին հասցնի իր պատկերապատմումը: